



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Յովէլ մարգարէէն մեղի այժմէական պատգամ մը

Վ. Ս.

Հոգ. կեանք

Հեռաւոր տեսարանը եւ յաջորդ քայլը

Թարգ. Ն. Ս.

Հոգեկան ախտեր

Ս. Օ. Փափազեան

Տէրը անապատ

Թարգ. Վ. Սահակեան

Աստուծոյ տանող ճամբան

Թարգ. Վեր. Յ. Եղիազարեան

Կենաց ածուներէն

Աստուծոյ վստահել

Լէթիմըր

Հուսկիւն

Դիւրագագիւն

Սերտողութիւն

Լեզուն մեղքերը

Կենսագրական

Աստուծոյ Մօնո

X X X

Մանկանց սիւնակ

Հասկաքող

Զանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ փրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք հշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի հշմարիտ «Բան»-ին
ներկայացուցիչն ալ չհանջնար ու եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԲԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԲԵՐԷՆ** միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի ըյս պիտի
տայ:
Եվեա. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Կանգիստը մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

Թ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1955

ԹԻԻ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎԵԼ ՄԱՐԳԱՐԵԷՆ ՄԵԶԻ ԱՅԺՄԷԱԿԱՆ ՊԼՏԳԱՄՄ ՄԸ

Ինչպէս «ըսողը Աստուածաշունչ Գիրքին» մէջ, նաեւ Յովելեայ մարգարէութեան մէջ Աստուած կը խօսի մեզի մարգարէին բերնով: Ինչպէս Աստուածաշունչի շատ մը ուրիշ մասերը՝ նաեւ այս գիրքին պատգամն ալ կը յարմարի նախ մարգարէին ժամանակակից ժողովուրդին, երկրորդ, մարգարէութիւն մըն է իրմէ հազարաւոր տարիներ յետոյ պատահելիք դէպքերուն. ու վերջապէս նաեւ մեզի Կամար գրուեցաւ:

«Ասիկա ձեր որդիներուն պատմեցէք, ու ձեր որդիները իրենց որդիներուն, ու անոնց որդիները յետագայ ազգին պատմեն»: (Յովել Ա. 3):

Ներկայ յօդուածով պիտի ջանանք պատգամէն այժմէական դասեր անել:

Ահաւասիկ պատգամը.—

Տէրոջը ժողովուրդը մեղք գործած է.

Տէրը զանոնք խոտուեցաւ պատժած է,

Տէրը ապաշխարութեան կոչ կ'ուղղէ իր ժողովուրդին,

Տէրը անոնց հրաշալի խոստումներ կ'ընէ:

Մեղանշած ու պատժուած Իսրայէլը անոր աւերակ վիճակին մէջ իսկ Տէրը «Իր որթը, իր թղենին, իր ժողովուրդը և իր ժառանգութիւնը» կը կոչէ. անոնց երկիրը «Իր երկիրը», անոնց սրբարանը «Իր տունը, եւ Ինքզինքը «անոնց Աստուածը կը կոչէ. «Ու պիտի գիտնաք թէ... ձեր Աստուածը Ես եմ, եւ ուրիշ մը չկայ» Բ. 27:

Տէրոջը ժողովուրդը մեղանշած է, հոս անոնց մեղքին ահաւորութիւնը կը հասկցուի պատիժին ահաւորութենէն եւ կամ պատիժէն յետոյ անոնց ներկայ վիճակէն:

Ի՞նչ ահաւոր վիճակ է ան:

Առիւծի աղաւանդով ու մատակ առիւծի ժանիքներով զօրաւոր ու անթիւ ազգ մը՝ Տէրոջը

որթը աւերած, Տէրոջը թղենին կոտորած, զայն բոլորովին մերկացուցած, վար ձգած եւ անոր ուռերը ճերմկացուցած է (Ա. 6, 7):

Բաղդասենք այս վիճակը մեր եկեղեցիներու ներկայ վիճակին հետ: Մեր եկեղեցիները պարապ են նոր մեղաւորներէ, մեր աղօթածոյնքը պարապ են հաւատացեալներէ, մեր երիտասարդները փոխանակ Աստուծոյ խօսքովը ուժովցած չարին յաղթելու՝ աշխարհապէս են ու աշխարհ կը ծծէ անոնց երիտասարդական կորովի ուժերը: Մարմնի ցանկութիւնը, ու աչքերու ցանկութիւնը ու այս կեանքին ամբարտաւանութիւնը գերի վարած է նոյնիսկ անոնց երիտասարդի կամքերը (Ա. Յովհ. Բ. 14 - 16): Մեր մանուկներու և դէ մա կ ա ն կեանքերուն մէջ մեղքը կը մտնէ ու անոնք դեռ իրենց քրտան տարիքը չկոխած արդէն կեանքերին պմայի անսպասու կը դառնայ (Բ. 3): Մեր հոգեւոր կիներուն ու աղջկանց զարգարանքը փոխանակ սրտին ծածուկ մարդը՝ անեղծութիւնով հեղ ու հանգարտ հոգիին զարդը ըլլալով՝ դրսէն... շքեղ հանդերձներ հագնելով է (Ա. Պետ. Գ. 3, 4): Մեր քարոզներուն շատերը խօսքերու ճարտարութիւնով Քրիստոսի խաչը ոչինչ կ'ընեն (Ա. Կոր. Ա. 17), իսկ անոնք որ Քրիստոսի խաչը կը քարոզեն՝ անոնք ալ ստէպ անպտուղ կը մնան: Աստուծոյ խօսքը կը սերմանուի, բայց անոր վերայ Սուրբ Հոգւոյն անձրեւը չտեղար: «Հողին չոր կոշտերուն տակ սերմերը կը փախն» (Ա. 17), եւ Տէրը մեր մէջ «հիւրի պէս» ու գիշերը իջեւան ընելու դարձող ճամբորդի պէս, ապշած մարդու պէս, կամ ազատելու կարողութիւն չունեցող հզօրի մը պէս է» (Երեմ. ԺԳ. 8, 9):

Մեր մէջ կը պակսի արթնութիւնը. եկեղե-

ցիւներու այս աւերակ վիճակին ի տես ողբը ու կոծը, լալն ու սգալը, քուրձը ու հառաչանքը, աղօթքով զիշերներ լուսցնելը, ծոմապահութեան օրերն ու հանդիսաւոր ժողովները, մեր սրտերուն պատուելին ու բոլոր սրտով Տէրոջը դառնալը: Մեր եկեղեցիներուն մէջ հոգիներ չեն ապաշխարեր. մենք կը քարոզենք, բայց Սատանան կը տանի յաղթանակը հոգիներուն վրայ: Իսկապէս մենք «յղացանք, ցաւեր քաշեցինք, հով ծնանողի պէս եղանք, ու երկիրը չկրցանք ազատել (Եսայ. ԻԶ. 18): Մեր վազելը անատուգու. Թեամբ եղաւ ու մեր բռնամարտութիւնը որպէս թէ հովը ծեծելով (Ա. Կոր. Թ. 26): Մեր փողերը անորոշ ձայն հանեցին ու պատերազմի պատրաստուողներ չեղան (Ա. Կոր. ԺԴ. 8): Եւ եթէ պատահին ալ հազուադէպ աշխատութիւններ որքա՛ն տկար հոգիներ են որ կը ծնին: Մեր նորահաւատները կը հպարտանան (Ա. Տիմ. Գ. 6): Մեր մէջ զիրար անարգելու եւ զիրար դատելու (Հռով. ԺԴ. 3) հոգին որչա՛փ աւերներ գործած է ու տակաւին կը շարունակէ գործել: Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները սուգ կը բռնեն (Ա. 9): Մեր հովիւները հօտին անհնազանդութեանը պատճառաւ հոգիներու հսկումի գործը ոչ թէ խնդութիւնով՝ հապա հառաչելով կ'ընեն, ինչ որ օգտակար չէ. (Եբր. ԺԳ. 17): Իրաւցընէ, «մեր Աստուծոյն տունէն ուրախութիւնը ու ցնծութիւնը կարած է» (Ա. 46):

Ու տակաւին որքա՛ն անկատար է մեր այս նկարագրութիւնը, որքա՛ն հեռու է անիկա եկեղեցւոյ ներքին, իրական հոգեւոր վիճակէն: Այն վիճակը զոր Աստուած կը տեսնէ ու գիտէ: «Բանդի եթէ մեր սիրտերը մեզ կը մեղադրեն, հապա (որչա՛փ աւելի) Աստուած (որ) մեր սիրտերէն մեծ է եւ ամէն բան գիտէ» (պիտի մեղադրէ մեզ (Ա. Յովհ. Գ. 20): Ես կը ճանչնամ հաւատացեալներ, որոնք իրենց հոգեւոր կեանքին հետ կը քաշքշեն գիտակցաբար որոշ մեղքեր, եւ այսպէսով իրենց վրայ կը բերեն այն ահարկու դատապարտութիւնը, զոր կ'ըսէ առաքեալը, «Իսկ եթէ մենք որ կ'ուզենք Բրիստոսով արդարանալ, մեղաւոր զտնուինք, ուրեմն Բրիստոս մեղքի պաշտօնեալ եղաւ (Գաղ. Բ. 17): Իրաւցնէ մեր վրայ ալ առիւծի ակռաներով, ու մատակ առիւծի ժանիքներով զօրաւոր ու անթիւ ազգ մը յարձակած է, ու մեզ՝ Տէրոջը որթը՝ աւրած, Տէրոջը թգենին կոտորած, զայն բոլորովին մերկացուցած, վար ձգած ու անոր ու, ուրը ճերմկացուցած է: Եւ ինչպէս երբեմն մարգարէն, հիմա ալ մենք ի տես Աստուծոյ ժողո-

վուրդին ու Անոր սրբաբանին այս աւերակ վիճակին՝ սրտակեղէք կոչ մը կ'ուզենք Աստուծոյ կողմանէ.—

Արթնցէք, ով գինովներ ու լացէք, ովք ըրէք կոյսի մը պէս որ իր մանկութեան էրկանը համար քուրձ հագած կ'ողբայ...: Քուրձ հագէք ու ողբացէք ով քահանաներ, հառաչեցէք ով սեղանին պաշտօնեաները, եկէք. ով իմ Աստուծոյ ծառաները, գիշերները քուրձերու մէջ անցուցէք...: Ծոմապահութեան օր որոշեցէք, հանդիսաւոր ժողով քարոզեցէք, ծերերը ու երկիրն բոլոր բնակիչները ձեր Տէր Աստուծոյն տունը ժողվեցէք, ու Տէրոջը աղաղակեցէք...: Ժողովուրդը ժողվեցէք, ժողովքը սրբեցէք, ծերերը հաւաքեցէք, տղաքները ու կաթնիկեր մանուկները ժողվեցէք, փեսան իր սենեակէն թող ելլէ ու հարսը իր առագաստէն: Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները սրահին ու սեղանին մէջսեղ թող լան, ու ըսեն, Ով Տէր, Քու ժողովուրդդ խնայէ, եւ Քու ժառանգութիւնդ նախատինքի մի տար... ինչո՞ւ համար ժողովուրդներուն մէջ ըսեն թէ ո՛ւր է անոնց Աստուածը: 3ովել Ա. 5, 8, 13, 14, Բ. 16, 17

Կասկած չկայ թէ այս կոչը ապաշխարութեան ու զղջումի, հողի ու մոխիքի վրայ զղջալու կոչ մըն է կոտորած ու խոնարհ սրտերու: «Ու ձեր սրտերը պատռեցէք եւ ոչ թէ ձեր հանդերձները (Բ. 13): Ու քանի որ հիմա հանդերձ պատռելու սովորութիւնը չկայ՝ ես կը խորհիմ որ եթէ մարգարէն մեր օրերու լեզուն գործածէր շատ մը վիճաբանող հաւատացեալներու եւ շատ մը պերճախօս քարոզիչներու պիտի ըսէր, «Ու ձեր սիրտերը պատռեցէք ոչ թէ ձեր կոկորդները»: Այս զղջումը, այս խոնարհիլը, այս սրտեր պատռելը աղօթելու համար եղած կոչ մըն է: Նոյնիսկ երբ կ'ըսէ հանդիսաւոր ժողով քարոզեցէք, բոլորը ձեր Տէր Աստուծոյն տունը ժողվեցէք», ոչ թէ որպէսզի հոն խոնարհութեան ու զղջումի վրայով ժողովուրդին 45 վայրկեանոց քարոզներ տրուին, հապա որպէսզի պաշտօնեայ ու ժողովուրդ Տէրոջը աղաղակեն: Ու երբ կ'ըսուի «ժողովուրդը ժողվեցէք», ասիկա Տէրոջը առջեւ պաշտօնեայ ու ժողովուրդ, ծերեր ու կաթնիկեր տղաքներ միասին լալու համար է:

Հոս կոչ կայ աղօթելու, շատ աղօթելու, գիշերներ լուսցնելով աղօթելու, յիտին աստիճան խոնարհութեամբ (քուրձով) աղօթելու, լալով, ողբալով, հառաչելով, սգալով աղօթելու, միայն ու միայն Աստուծոյ փառքը նկատի ունենալով աղօթելու:

«Ինչու համար ժողովուրդներուն մէջ ըսեն թէ ո՛ւր է անոնց Աստուածը» (Բ. 17):

«Ողբ ըրէ կոյսի մը պէս որ իր մանկութեան էրկանը համար քուրձ հագած կ'ողբայ (Ա. 8):

Տէրոջը խօսքը ինչ որ կ'ըսէ՝ տառացիօրէն զայն ըսել կ'ուզէ: Ու երբ օրինակներով կը խօսի, տուած օրինակին մեկնութիւնը իր ամբողջ գորութեամբ ընդունելու եւ զգալու ենք:

Այսպիսի եղերական պարագաներու տակ ընելիք ողբերնիս, թափելիք արցունքնիս, քաշելիք ցաւերնիս կը պահանջէ մեզմէ Աստուած մեր եկեղեցիներուն մեռած վիճակին համար, մեր շուրջիններուն օրէ օր, ժամէ ժամ վատահալլերով դէպի կրակէ ու ծծումբէ լիճը, դժուրքի յաւիտեանական հնոցը գիմող հոգիներու համար, զորոնք Աստուած իր պատկերովը ստեղծած է, որոնց համար Քրիստոս խաչին վրայ իր արիւնը թափած է, եւ որոնց համար Աստուած մեզմէ կ'սպասէ, կ'աղերսէ որ ազօթենք, ցաւ քաշենք, լանք ու ողբանք ու կրակէն ազատենք:

Մէր Փրկիչը «Իր մարմինին օրերը սաստիկ զոչումով ու արցունքով ազօթք ու աղաչանք մատուց Աստուծոյ» (Եբր. Ե. 7), «Ու սաստիկ նեղութեան մէջ ըլլալով աւելի շերմեռանդութեամբ ազօթք կ'ընէր: Եւ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր որ գետինը կը թափուէր» (Ղուկ. ԻԲ. 43, 44):

Աստուծոյ Որդւոյն, Քրիստոսի թափած այս արեան կաթիլներով ու խաչին վրայ Անոր կողէն վազած արիւնովը լուացուած հաւատացեալ եղբայրս, դուն այս ազօթքի կեանքը կ'ապրի՞ս: Եթէ ոչ՝ մի տնտնար, ծուկի եկուր ու ազօթէ, խնդրէ Յիսուսէն որ քեզի ազօթք ընել սորվեցնէ: Սուրբ Դրքին մէջ սերտէ Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Մովսէսի, Դաւիթի, Եղիայի, Դանիէլի, Պօղոսի եւ բոլոր սուրբերուն ազօթքները, ազօթքի կեանքերը եւ մանաւանդ Յիսուսի ազօթքի կեանքը: Խնդրէ Աստուծմէ որպէսզի քեզի ազօթքի ընկերներ տայ ու փնտռէ եկեղեցիքիդ մէջ ազօթքի ընկերներ. խնդրէ մէկուն քեզի հետ միասին ծնրադրել վասնզի շատ մեծ է այսպիսի ազօթքներուն համար Յիսուսի խոստումը, «Եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ մի արանին, ամէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս որ երկինքն է» (Մատթ. ԺԸ. 19): Ու մարդարէն ազօթքի համար իր ուղղած կոչը այս հրաշալի խոստումներով կը վերջացնէ,

«Այն տոնն Տէրը իր երկրին Հոմար պիտի նստանայ, ու իր Ժողովուրդին պիտի ողորմի, եւ Տէրը պատառնան պիտի տայ ու իր Ժողովուրդին ըսէ, ահա Ես ձեզի ցորեն, գինի ու իւղ պիտի զրկեմ ու անոնցմով պիտի կշտանաք»:

Ամէն, Տէր Յիսուս, մեր վրայ «շնորհքի եւ ազօթքի հոգին թափէ» (Ձաք. ԺԲ. 10): Վ. Ս.

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՀԵՌԱՒՈՐ ՏԵՍԱՐԱՆԸ ԵՒ ՅԱՋՈՐԴ

ՔԱՅԼԸ

(J. H. Jowett)

Առջեւի եղածներուն կը դիմեմ... Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին, մրցանակին կը վազեմ: Փիլ. Գ. 14

Կարծեմ լիովին կը հասկնամ թէ John Henry Newman ինչ ըսել կ'ուզէր իր՝ մեզի ծանօթ հետեւեալ տողերովը՝

«Ես չեմ ուզեր տեսնել հեռուն,

Ինծի մէկ քայլ է բաւ» (Երգ. 202)

Արեւը մարած է. երկիրը մթութեամբ ծածկուած: Խաւարին մէջ կարելի չէ մէկ ճամբան միւսէն զանազանել: Երկինքին վրայ ո՛չ լուսին կ'երևնայ եւ ո՛չ ալ աստղեր: Ձեռքիս մէջ լապտեր մը կայ որուն լոյսը կը շրջապատէ ոտքերս եւ ես կարող եմ առջեւս մէկ քայլ միայն տեսնել. յետոյ ուրիշ քայլ մը եւ այսպէս յաջորդաբար մէկ քայլ միայն ոչ աւելի: Ահա նիւմէնի զծած պատկերը եւ այս խորհրդապատկերով անիկա կը յայտնէ իր անձկութիւնը կենսական խնդրոյ մը նկատմամբ: Մեծ շփոթութեան է մատնուած անոր աշխարհը. Աղօտացած է անոր դատողութիւնը: Որոշ ըմբռնման լայն ու բաց ճամբաներ չեն երկարի անոր առջեւ: Չկրնար նախատեսել ապագայ դէպքերը: Չգիտեր թէ ինչպէ՞ս դուրս պիտի ելլէ զինք շրջապատող շփոթութենէն: Մթութեան թանձր ամպեր կը ծանրանան իր վրայ ու կը շրջապատեն զինք: Ուստի իր աղմկալից հոգին մութ գիշերուան դէմ մղած պայքարէն ետ կ'անչլիով՝ կը ջանայ զայն լռեցնել: Կ'աշխատի թուլցնել իր աչքերուն մկանդներուն պրկումը՝ որով անտեսանելի առարկաներու մէջ թափանցել կը ձգտէր: «Ես չեմ ուզեր տեսնել հեռուն»: Սակայն անիկա չուզեր ձեռքերը ծալլելով նստիլ: Չուզեր չէզոք սպասել մինչեւ որ խաւարը պայծառ լոյսի տեղի տալով իր ճամբան շարունակէ: Անոր նպատակն է խաւարին մէջէն յառաջանալ, անընդհատ յառաջանալ: «Ուղղէ քայլերս», նոյնիսկ մութին մէջէն տուր որ շարունակեմ ճամբորդութիւնս, թող ըլլայ թէ քայլ առ քայլ: «Ինծի մէկ քայլ է բաւ»:

Այս է նիւմէնի գաղափարը, եւ անոր հոգին որոշ քայլեր կ'առնէ: Բայց եւ այնպէս ես միշտ

քիչ մը ահամալ եւ տնտնալով կ'երգեմ այս տողերը: «Ես չեմ ուզեր տեսնել հեռուն»: «Ես չեմ ուզեր»: Կը վախնամ թէ ես շատ անգամ կ'ուզեմ: Գոնէ կ'ուզեմ որ մութին մէջէն տեսնեմ նպատակակէտս եւ դանդաղ ճամբորդութիւնս հաճելի դառնայ նպատակակէտիս հեռանկարովը: Թերեւս Նիւմէնի հոգին ալ իր ճամբորդութեան վախճանը կը դիտէր խաւարէն անդին, քանզի «հեռաւոր նպատակը» մեծ առնջութիւն ունի «յաջորդ քայլ»ին հետ: Հեռուէն եկող լոյսը, նոյնիսկ եթէ ան հիւղակի մը պատուհանէն ճառագայթող շող մը միայն ըլլայ, կարող է ուղղել եւ ոգեւորել մարդուն քայլերը:

Երբ տակաւին գոլէճի ուսանող էի, գիւղ մը քարոզելու զրկուեցայ երէցին բացակայութեան պահուն եւ ծեր երկրագործի մը հիւրն եղար: Քարոզէն վերջ՝ մինչեւ իրիկուն շոգեկառքին դա՛լուն անոր տունը մնացի: Մութը կոխեց ու խաղաղ ցորեկուն յաջորդեց խիստ փոթորկոտ գիշեր մը: Շատ չանցած խորտուբորտ ճամբաները գետակներու վերածուեցան: Երբ ճամբայ ելլելու ժամանակս մօտեցաւ, երկրագործը ինծի լապտեր մը տուաւ որ «ուր երթալս տեսնեմ եւ փոսի մը մէջ չիյնամ»: Այսչափն ալ բան մըն էր, սակայն ուրիշ բան մըն ալ ըսաւ, որ աւելի լաւ էր, «Կը տեսնե՞ս լոյսի այն շողը, հարցուց ինծի հեռուները ցուցնելով, «Ոչ, ո՛ւր է» հարցուցի: Յետոյ աչքերս վարժեցուց նշմարելու փոքրիկ լոյս մը, որ քանի մը մղոն հեռուն կ'երեւէր: «Ահա կայարանը, ջանա դէպի հոն քալել», ըսաւ: Ինծի պէտք եղածն ալ այս երկու բաներն էին, լապտեր մը, քայլերս լուսաւորելու եւ հեռաւոր նպատակի մը շողը՝ զանաւոր ուղղելու եւ ճամբորդութիւնս հաճելի դարձնելու:

Անտաքակոյս այս էր նաեւ Պօղոս Առաքեալի փորձառութիւնը իր կեանքի փոթորկոտ ու տառապալից ճամբորդութեան ընթացքին: Խաւարի ու շփոթութեան մէջէն կը ճառագայթէր «Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մըցանակը»: Անոր նպատակակէտին փառաց լոյսին ճառագայթները շարունակ կը լուսաւորէին առաքեալին երեւակայութիւնը: Անոր աչքերը միշտ վառ էին եւ անոր առած իւրաքանչիւր քայլն ու նպատակակէտը կարելի չէր իրարմէ զատել: Վսեմ նպատակը կ'ոգեւորէր անոր ամէն մէկ քայլը: Անոր կեանքի պատմութիւնը եւ իր հոգեւոր տրամադրութեանց ու շարժմանց մասին իր իսկ տուած տեղեկութիւնը կ'ապացուցանեն այս կէտը: Անիկա երբեք չկոր-

սնցուց հեռաւոր լոյսը ու բնաւ չհեռացաւ անկէ: «Ետեւէ ինկած եմ որ բռնեմ մըցանակը, որու համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ»: Անոր աչքերը կը փայլէին իր կեանքի նպատակակէտին պայծառ լուսովը: Հեռաւոր նպատակին փառքը կը ցոլար անոր մօտաւոր քայլափոխին վրայ:

Առաքեալը շարունակ իր նպատակակէտէն օգտուած քայլ առ քայլ յառաջացաւ: Հեռապատկերին մէջ ամբարուած ոյժէն տոգորուելով անոր քայլերը թեթեւցան եւ երիտասարդացան: Սխալ պիտի չըլլար ըսել թէ անիկա իր ամէն մէկ յաջորդ քայլը կ'առնէր վերջին քայլին ընկերակցութեամբ: Վերջնականը ձուլուած էր անմիջականին հետ: Անհարթ ճամբաները քալած միջոցին իսկ ինքզինքը կը վարժեցնէր «ոսկեղէն փողոցներուն» վրայէն քալելու: Աստուծոյ շողշողուն նպատակակէտները այսպիսի հրաշքներ կը կատարեն: Անոնք մեզ զիմաւորելու կ'ելլեն:

Շատեր անյաջող են յաջորդ քայլը առնելու մէջ, քանզի չունին փառաւոր հեռանկար մը: Շատեր երբեք չեն առներ յաջորդ քայլը, որովհետեւ տուն չունին: Որչափ ժամանակ որ տուն մը ունիս, հաճելի է յաջորդ քայլն առնել: Սակայն երբ տուն չունիս, թափառաշրջիկ մըն ես, չես կրնար քայլ առ քայլ յառաջանալով նպատակի մը, յայտնի յառաջդիմութեան պողոտայի մը մօտենալ:

Ուրիշ խօսք մըն ալ հեռանկարին կատարած ծառայութեան մասին: Մեր հեռապատկերին հանդէպ տաժած զգացումը մեզի կը յայտնէ թէ յաջորդ քայլը ինչպէ՞ս պիտի ըլլայ: Հեռաւոր նպատակին հետ ունեցած մեր հաղորդակցութիւնը կը դաստիարակէ ու կը զտէ անմիջականը ըմբռնելու մեր կարողութիւնը: Սուր աչքեր կ'ըստանանք ու մեր զանազանելու կարողութիւնը կ'աճի: Ուրեմն օգտակար է աստղերը դիտել: Մեր աչքերը զօրութիւն կ'ստանան մեր մօտաւոր պարտականութիւնները կատարելու: Մեր հոգեւոր ըմբռնումը ընդլայնելով յայտնի է թէ կ'ընդլայնի նաեւ մեր մտաւոր ըմբռնումը եւ մեր հեռատեսիլին լուսովը կը լուսաւորուին նաեւ մեր անմիջական պարտականութիւնները: «Քու լոյսիդ մէջ լոյս պիտի տեսնենք» (Սաղ. ԼԶ. 9): «Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է ու իմ շաւիղներուս լոյս» (Սաղ. ՃԺԹ. 105):

Թարգ. Ն. Մ.

հ. 6, 8, Չըսին թէ ո՞ւր է Տէրը (Ինչո՞ւ):
 հ. 11, Ինչո՞ւ ձեր Աստուածը փոխեցիր:
 հ. 14, Ինչո՞ւ ծառայի զաւկի ընթացք ունեցաք:
 հ. 17 Ինչո՞ւ քու Տէր Աստուածդ ձգեցիր:
 հ. 18, Եգիպտացւոց ճամբան ի՞նչ բան ունիս, եւ:
 Բոլոր պատգամը հրաւերով խառն հարցառ-
 քննութիւն մըն է: Բայց անկասկած հարցում-
 ներէն ոչ մէկը այնքան ուղղակի եւ իմաստաւից
 է, որքան մեզի նիւթ եղող հարցումը, «Միթէ
 ես անապատ եղայ Իսրայէլի» (հ. 31). Տէրը ա-
 նապատ՝.՝.՝. Իր փրկեալներուն՝.՝.՝.:

Անապատը անփափաքելի տեղ մըն է:

Սբ. Գիրքին մէջ կրկին անգամներ կը հան-
 դիպինք սա խօսքին, «Այն մեծ ու ահագին ա-
 նապատը» (Բ. Օրին. Ա. 19). ասոր նպատակն է
 Իսրայէլի անապատային ճամբորդութեան ահաբ-
 կու նկարագրութիւնը ընել: Անապատը անփա-
 փաքելի, անբերրի, անհաճոյ տեղ մըն է ուր ոչ
 ոք կը փափաքի բնակիլ: Ահռելի չի՞ թուիր հոս
 յայտնուած կարելիութիւնը, այսինքն թէ ազգե-
 րու Յանկալին, բոլորովին ցանկալի Սիրականը,
 տասը հազարի մէջ Երեւելին, անհատական հո-
 գիին համար անհրապոյր եւ անբաղձալի դառ-
 նայ: Այսու՝ մեր համարը այդ կ'եզրակացնէ:
 Շնորհքի մէջ աճելու ամենէն վատահ եւ ապա-
 հով փաստերէն մին ալ՝ Բրիստոսի կատարեալ
 գործին, Անոր հոգեւոր փառքերուն ու գեղեցկու-
 թեանց վրայ մեր հիացումին ու գնահատութեան
 աւելնալն է:

Թերեւս այնքան զարմանալի չերեւէր եթէ
 Տէրը աշխարհային մարդոց իբր անապատ թը-
 ւէր: Բայց հոս ամենէն տխուր կէտը այն է թէ
 Տէրոջը փրկեալներէն շատեր Անոր վրայ իբր
 անապատ կը նային: Իսրայէլ փրկեալ էր: Ոչ
 միայն անոնք Եգիպտոսի մէջ ալիւնին տակէն
 անցնելով ազատած էին, հապա նաեւ կարմիր
 ծովուն մէջէն փրկուած էին: Տէրը անոնց կաթ
 ու՝ մեղր բղխող երկիրը տուած էր իբր ժառան-
 ցութիւն: Ասկէ աւելի ի՞նչ կրնար ընել: Իսրա-
 յէլացիք թէպէտ բծախնդիր էին իրենց կրօնա-
 կան պարտականութիւնները կատարելու մէջ՝
 բայց անոնք պարապ ձեւապաշտներ, ծիսապաշտ-
 ներ դարձած էին: Անոնք Տէրը կորսնցուցած էին
 նոյնիսկ Անոր սրբարանին մէջ: Մենք ամենս
 շատ ցաւալի գիտակցութիւնը ունինք թէ քա-
 նի աւելի պակաս աղօթենք, այնքան աւելի
 պակաս փափաք կ'ունենանք աղօթելու: Սուրբ
 Գիրքը որքան պակաս կարդանք, այնքան ա-
 վելի պակաս փափաք կ'ունենանք զայն կար-
 դալու, և որքան աւելի զանց ընենք Սուրբ Գիր-

քըն ու աղօթքը այնքան աւելի պակաս կը ծա-
 րաւինք Աստուծոյ եւ այնքան աւելի կը ճեղա-
 նանք Աստուծմէ: Սուրբ Գրքին ամենօրեայ եւ
 ջերմեռանդ ընթերցումը զանց ընելով եւ ան-
 հատական զաղտնի աղօթքի պակաս ժամանակ
 յատկացնելով՝ Տէրը մեզի համար անապատ կը
 դառնայ, այո, ուրիշ ոչինչ, բայց միայն չոր, ան
 հրապոյր ու ծարաւ երկիր մը ուր շուրջ չկայ:

Բայց անապատ երկիրը կրնայ նորէն ծաղկիլ
 «Անապատը ու չոր երկիրը պիտի ուրախանայ
 եւ անբնակ երկիրը պիտի ցնծայ, ու շուշանի
 պէս պիտի ծաղկի, անիկա բոլորովին պիտի
 ծաղկի, և ցնծութեամբ ու երգերով պիտի ու-
 րախանայ» (Եսայ. ԼԵ. 1, 2):

Այսպէս կը տեսնենք թէ անապատը ու չոր
 երկիրը կրնան նորէն եղեմի պարտեզին պէս ու-
 րախութեան եւ Աստուծոյ հետ յարաբերութեան
 տեղ մը դառնալ, ու անբնակ երկիրը կրնայ ցն-
 ծալ ու շուշանի պէս ծաղկիլ: Բրիստոսի վրայ «ա-
 նապատ» ային նայուածքով մը նայելէ կրնանք
 ազատիլ, եւ անապատը ուրախութեանց ու վա-
 յելքներու պարտեզի մը կը փոխուի:

Ներքին սենեակի, աղօթքի կեանքին մէջ թը-
 նակող հաւատացեալներ, Բրիստոսի սիրահարած
 սուրբեր՝ ի՞նչ փառաւոր լեզուով զոված են ի-
 րենց Տէրը: Ահաւասիկ օրինակ այն միջնադար-
 եան սուրբին, Տաթթըր Ճան Թօլլըրի զրածը իր
 Տէրոջ վրայօք.—

«Ինչ է փեսան իր հարսին,
 Սիրուած արքայն իր երկրին,
 Պահապանը ժիր բերդին,
 Ինչ նաւուղին է ղէկին
 Այնպէ՛ս ես Տէր, Դուն ինծի:

Ինչպէս աղբիւրն ի պարտեզ,
 Ինչպէս ճրագն ի խաւար,
 Ինչպէս արտին՝ պահուած դանձն,
 Մանանան ի տապանակ
 Այնպէ՛ս ես Տէր, Դուն ինծի:

Ինչ է նուագն հարսնիքին,
 Ինչ դրոշմը կնիքին,
 Ինչպէս դարմանն հիւանդին,
 Գինոյ բաժակն խնճոյքին
 Այնպէ՛ս ես Տէր, Դուն ինծի:

Ինչպէս մեղրը խորիսիին մէջ,
 Եւ աղամանդն իր զարդին մէջ,
 Ինչպէս լոյսը լապտերին մէջ,

Եւ Սիրուած հայրն զաւակաց մէջ
Այնպէ՛ս ես Տէր, Դուն ինծի:

Արեւն ի՛նչ է մեր աշխարհին,
Պատկերն ինչ է հայելիին,
Պտուղն ինչ է թուզի ծառին,
Աստուայ ցօղն զաշտի խոտին
Այնպէս ես Տէր, Դուն ինծի»:

Անկասկած այս տողերը իր մաքին մէջ ունե-
նալով մեզի ժամանակակից մեծ քարոզիչը
Սպրճըրն գրեց.—

Ինչ է ձեռքը կիթառին,
Ինչ է շունչը սրինգին,
Ինչ է բոյրն անուշ վարդին,
Ինչ է ակը ալբիւրին,
Ինչ է ծաղիկն մեղուին
Այն է Տէր Յիսուս ինծի:

Ինչ է մայրը իր զաւկին,
Առաջնորդն կորուսեալին,
Փրկկազինը գերիին,
Ինչ է իւզն կողմնացոյցին,
Ինչ է ջուրը ովկէանին
Այն է Տէր Յիսուս ինծի:

Ընթերցող հաւատացեալ եղբայրս ու քոյրս
դուն ալ կրնա՞ս այսպէս ըսել քեզ իր արիւնովը
ծախու առնող Փրկչիդ համար: Մէկ տուն մը
եւս ծերունի Տաթևը թօլըրէ՝ զոր կրնայինք
իբր աղօթք մատուցանել.—

Ինչպէս զաշտի շուշանը
Քաղցըր, ճերմակ, անապակ,
Ինչպէս կոխուած մանիշակն
Թափառական ոտից տակ,
Ինչպէս վարդը փուշերուն մէջ
Նորէն ալ վարդ կը կենայ,
Շուրջի փուշին ու մացառին
Հանդէպ անհոգ կը մնայ,
Արեւադիկն ինչպէս միշտ
Դէպ արեւին կը դառնայ,
Հետեւելով միայն անոր
Հաւտարմութեամբ հաւատարիմ
Այնպէս ըրէ Տէր զիս Քեզի:

«Որպէսզի ինք ըլլայ ամէն բանի մէջ նախա-
պատիւ» (Կող. Ա. 18), «Քրիստոս ըլլայ ամէն
ամէն բանի մէջ» (Կող. Գ. 14): Ամէն, Տէր, այս-
պէս թող ըլլայ: Թարգ. Վ. Ս.

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՄԲԱՆ

10 ՄԵՐ ԱՂՈԹՔԻ ԿԵԱՆՔԸ

Ճշմարիտ քրիստոնեայ մը չկրնար հրաժարիլ
Աստուծոյ խօսքէն- վասնզի անոր շատ պէտք ու-
նի: Շատեր իրենց դարձի գալէն առաջ ալ աղօ-
թած են, բայց այդ ատենուան իրենց աղօթքը
կեղեւ մըն էր առանց միջուկի: Պօղոս անկեղծ
մարդ մըն էր եւ առաջ ալ կ'աղօթէր, բայց երբ
որ Քրիստոս իրեն երեւցաւ, ընդունեց երկնային
լոյսը, գիտակցութեան եկաւ եւ փափաքեցաւ
քրիստոնեայ ըլլալ, Տէրը անոր համար վկայեց
թէ «անիկա աղօթք կ'ընէ»: Քրիստոնեայ մը
պարտաւոր է կարելի եղածին չափ կանոնա-
ւոր աղօթքի պահեր ունենալ. Դանիէլ օրական
երեք անգամ կ'աղօթէր. Սաղմոսերգուն կ'ըսէ,
«Իրիկունը առտուն ու կէսօրին պիտի բողբոջեմ
ու հառաչեմ- ու անիկա իմ ձայնս պիտի լսէ»:
Յիսուս մեզի ըսած է, «Մտիւր քու ներքին սեն-
եակդ ու դուռդ գոցէ եւ աղօթք ըրէ քու Հօրդ
որ զաղտուկ տեղ կը գտնուի եւ քու Հայրդ որ
զաղտուկը կը տեսնէ քեզի յայտնապէս հատու-
ցում պիտի ընէ»: Հաւատացեալի մը աղօթքը ո-
րոշ ժամանակի մը հետ ալ կապուելու չէ, ան-
դադար ըլլալու է: Տէրը առակի մը մէջ ըսած
է թէ պէտք է ամէն ատեն աղօթել ու չձանձ-
րանալ, ինչպէս որ աշխատելու ատեն կը շըն-
չենք ալ, այնպէս ալ մարդ կրնայ գործել ու
աղօթել: Աստուծոյ Հոգին որ մեր քովը բընա-
կած է զմեզ կը ներկայացնէ Անոր մօտ անբար-
բառ հառաջանքներով: Հետեւէ առաքեալի խօս-
քին «բանի մը համար հոգ մի ընէք, հապա ա-
մէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով գոհու-
թիւնով մէկտեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ
յայտնի ըլլայ» (Փիպ. Դ. 6): Աղօթող որբեւարի
մը կար. երբ իր զաւակներէն մէկուն հար-
ցըուէր թէ ո՞ր է մայրիկդ, տղան կը պատաս-
խանէր, «Յիսուսին հետ»: Ի՛նչ քաղցր եւ օրի-
նակելի ժամադրութիւն:

Թարգ. (Վեր.) ՅԱԿՈԲ ԵՂԻՍԱՍԵԱՆ

Գափալա

.....

Թող իմ աղօթքս խունկի պէս շիտկուի, եւ
իմ ձեռքերուս վեր վերցուիլը՝ իրիկունս պա-
տարագին պէս: Սաղմ. ՃԽԱ. 2

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀԻԼ

Անցեալ դարուն Գերմանիոյ մէջ ապրող Աստուծոյ մարդ մը Վեր. Հայնքէ, օր մը զրասենեակը զբաղած պահուն տանը անտեսութիւն եկաւ եւ իրմէն դրամ ուզեց: Աւա՛ղ, Աստուծոյ հարուստ այս մարդը աշխարհային բարիքներէ աղքատ էր եւ մանաւանդ նեղն էր այս միջոցին:

—Դրամ կ'ուզես. չունիմ:

«Ուրեմն ի՞նչ ընելու եմ, հարցուց սպասուհին, այսօր ապառի՞կ գնումներ ընեմ»:

—Ո՛չ, պատասխանեց Վեր. Հայնքէ:

«Ուրեմն կէսօրուան ճաշի համար ի՞նչ պատրաստելու եմ»:

—Ոչինչ:

«Բայց այսօր, բան մը պիտի չուտե՞ս»:

—Անշուշտ, պիտի ուտեմ:

«Ուրեմն ուսկի՞ց առնելու եմ ճաշը»:

—Հոս, այս սենեակէն...

Պատաւ սպասուհին զուլիւր շարժեց, ուսերը թոթուեց եւ դուրս ելաւ:

Երբ ճաշի ժամը հասաւ, Հայնքէ գիտնալով թէ Աստուծոյ Իր խօսքին մէջ խոստացած էր իրենց ամէն պէտքերը հոգալ, եւ ասոր համար ինքն աղօթած ալ էր, վար իջաւ եւ խնդրեց որ սպասուհին սեղանը պատրաստէ:

«Բայց որո՞ւն համար», հարցուց սպասուհին:

—Մեզի համար:

«Մե՞զի, մենք ուտելիք ոչինչ ունինք»:

—Հոգ մի ընէր եւ հանդարտ եղիր, բաւականաչափ ուտելիք պիտի ունենանք:

Սեղանը պատրաստուեցաւ: Հայնքէ նստեցաւ եւ սովորականին պէս աղօթեց: Հազիւ թէ աղօթքը լմացուցած էր, դուռը զարնուեցաւ: Դրացի հարուստ վաճառականի մը ծառան ու սպասուհին էին: Իրենց տէրը այդ օրը քանի մը բարեկամներ ճաշի հրաւիրած էր. բայց ճիշդ այն ժամուն երբ ամէն բան պատրաստ էր, լուր եկած էր թէ հրաւիրեալները չէին կրնար գալ: Ուստի մարդը իր պատուելիին զրկած էր կողով մը լեցուն ուտելիք, խնդրելով որ այս ընծան սիրով ընդունի: Հայնքէ առանց բան մը ըսելու սկսաւ ախորժակով ուտել. եւ խնդրեց պատաւ անտեսութիւնէն ալ իր օրինակին հետեւիլ: Բայց անիկա շատ զարմացած եւ քիչ մըն ալ գայթակղած, «Ինչպէ՞ս, դոչեց, շիտակ է որ ծառան չէս իշխար եւ Աստուծոյ շնորհակալ ըլլար այս մեծ հրաշքին համար»:

—Հրա՞շք, ըսաւ Հայնքէ, ես հոս հրաշք չեմ տեսներ, այս ամէնը բնական է եւ միայն բնական, ես ուրիշ բան չեմ տեսներ:

«Երանի՛ անոնց որ Տէրոջը կ'սպասեն...»:

«Հաւատարիմ է Անիկա որ խոստացաւ...»:

ԼԷԹԻՄԸՐ

Անկլիքան եկեղեցւոյ սկիզբը ապրեցաւ Լէթիմըր եւ Հէնրի ութերորդ բոնապարտին հանդէպ ինչ որ Յովհաննէս մկրտիչ բռնած էր Հերովդէսի հանդէպ: Օր մը երբ նա քարոզով թագաւորը քննադատած էր, անկէ կանչուեցաւ եւ ազդարարուեցաւ, «Եթէ դալ կիրակի հրապարակաւ ետ չառնես ինչ որ այսօր քարոզեցիր, զիտցիր որ կեանքդ վտանգի տակ է»:

Յաջորդ կիրակին եկեղեցին լեցումը էր պաւտականներով քանզի կ'ուզէին գիտնալ թէ առաքինի քարոզիչը ինչպէ՞ս պիտի կարենար այս դժուարութենէն դուրս ելլել: Լէթիմըր բեմ բարձրացաւ արտաքին ամենայն հանդարտութեամբ: Յետոյ բնարանը յայտարարելէ ետք այսպէս սկսաւ իր քարոզը:

«Հիմա ով Հիւկ Լէթիմըր, յիշէ թէ դուն քու երկրաւոր թագաւորիդ ներկայութեանը կը կայնիս. քու կեանքդ անոր ձեռքերուն մէջ է, եւ եթէ դուն անոր քմահաճոյքը չկատարես, անիկա քու ճերմակ մագերդ գերեզման պիտի իջեցնէ եւ իր ձեռքերը քու արիւնովդ պիտի ներկէ... Բայց յիշէ ով Հիւկ Լէթիմըր, թէ դուն կը կայնիս նաեւ թագաւորաց թագաւորին ներկայութեանը՝ եւ նա ըսած է, «Մի վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն ու անկէ հտել տալի բան մը ընելու կարողութիւն չունին, հապա... Անկէ վախցէք դուք, որ սպաննելէն հտել իշխանութիւն ունի գեհեանը ձգելու» (Ղուկ. ԺԲ. 4, 5): Այո՛, Լէթիմըր, Անկէ վախցիր...»: Այս արտասովոր յառաջարկէն յետոյ Աստուծոյ պաշտօնեան իր բնարանը բացատրեց եւ խիստ կերպով կիրարկում մը (յարմարում) մը բրաւ թագաւորին գեղիս ու անտառի կեանքին: Քարոզէն յետոյ Լէթիմըր թագաւորին մօտ կանչուեցաւ: —«Ինչպէ՞ս յանդգնեցար քու թագաւորդ այսպէս նախատել»:

—Եթէ իմ Աստուծոյ անհաւատարիմ գտնուէի՝ ինչպէ՞ս պիտի կրնայի իմ թագաւորին հաւատարիմ ըլլալ, պատասխանեց պատուելին:

—«Դրաւունք ունիս, ըսաւ թագաւորը, իրա՞ն է թէ իմ թագաւորութեանս մէջ կը գտնուի տա՛-

կաւին մարդ մը որ ճշմարտութիւնը խօսելու չափ պատուաւոր եւ համարձակ ըլլայ»:

Բայց Լէթիմըր արքայական շնորհքը շատ երկար չվայելեց: Պատմութիւնը կ'ըսէ թէ նա իբր հերետիկոս բանտարկուեցաւ եւ Հէնրի Ը.ի իշխանութեան վերջին տարին Լոնտոնի աշտաբակին մէջ բանտարկուած մնաց: Ու թէեւ Շոուարդ Զ.ի գահ բարձրանալուն ազատ արձակուելով իր կեանքին մնացած մասը իր սիրելի Տէրոջ ծառայութեան նուիրեց, բայց վերջապէս 1553 Օգոստ. 6ին ողջ ողջ այրուեցաւ արիւնառու Մարի Սթուարթ թագուհիին հրամանին վրայ:

ՀՈՒԱՅԹՅԻՆՏ

Հուայթֆիլտ ԺԸ. դարու նշանաւոր քարոզիչ մէք: Իբր հետեւանք Աւետարանը բացօթեայ քարոզելով երկար շրջաններ ընելուն՝ իր առողջութիւնը կանուխէն խանգարուեցաւ: Երբ իրեն կը թելադրէին ինքզինքը չափազանց յոգնութեան խնայել՝ նա կը պատասխանէր. —

«Կը նախընտրեմ մաշիլ քան թէ ժանգոտիլ»:

Օր մը որ կը պատրաստուէր դաշտի մը մէջ քարոզել, իր բարեկամներէն մին ըսաւ, աւելի լաւ կ'ընես եթէ երթաս անկողինիդ մէջ հանգչիս քան թէ քարոզես: Նա ըսաւ, «Ճիշդ է այդ»: Յետոյ աչքերը երկինք վերցնելով ու ձեռքերը միացնելով գոչեց, «Ով Յիսուս, ես Գոլ Գործիդ մէջ յոգնեցայ, բայց Գոլ Գործէդ Հյոգնեցայ. շնորհք ըրէ ինծի եւ տուր որ Գոլ խօսքդ հրապարակաւ խօսիմ»:

Իրաւ ալ Հուայթֆիլտ այդ օրը քարոզեց բայց քանի մը ժամ յետոյ մեռաւ:

«Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու իմաստուն ծառան՝ զոր իր Տէրը իր ծառաներուն վրայ զըրաւ, որպէսզի ատենին անոնց կերակուր տայ: Երանի է այն ծառային, զոր իր Տէրը եկած ատեն այնպէս ըրած պիտի գտնէ: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա»: Մատթ. ԻԴ. 43-47

ԴԻԻՐԱԳՐԳԻՌ

Աւետարանի քարոզիչ Ռօլէնտ Հիլ օր մը այնպէս կը քարոզէր, «Որովհետեւ հոգիներու վերելութիւնը իմ սրտիս վրայ կը ճնշէ եւ ես մեղաւորներուն կը պաղատիմ որպէսզի ապաշխարեն փրկուելու համար՝ մարդիկ զիս դիւրագրգիռ կը կոչեն: Անգամ մը երբ բլուրի մը կողքին կը

պտտէի, երեք մարդիկ տեսայ որոնք հոր մը կը փորէին: Յանկարծ հողը փլաւ եւ երեքն ալ տակը թաղուեցան: Ես օգնութեան կանչեցի եւ այնքան ուժով պօռացի որ մէկ մղոն անդիի զիւղէն ձայնս լսուեցաւ: Մարդիկ վազեցին եւ այս դժբաղդները որոնցմէ երկուքը դեռ կ'ապրէին, հողին տակէն հանեցին: Այն ստեղծ ոչ ոք խորհեցաւ զիս դիւրագրգիռ կոչել. մինչդեռ երբ այնքան խեղճ մեղաւորներու յաւիտենական անդունդը իշխալը տեսնելով անոնց կը պօռամ եւ կ'զգուշացնեմ իրենց սպառնացող կորուստը միթէ ասոր համար դիւրագրգիռ կ'ըլլամ. ոչ, ով մեղաւոր, ես երեք դիւրագրգիռ չեմ. անգամ մըն ալ քեզմէ կը պաղատիմ որպէսզի անմիջապէս Գրիստոս Յիսուս միակ Փրկչիդ բազուկներուն ապաւինիս:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԼԵԶՈՒԻՆ ՄԵՂՔԵՐԸ

Կարդալ ցալ. Գ.

Մահը ու կեանքը լեզուին ձեռքն են. Առակ. ԺԸ. 21: Իր բերանը ու լեզուն պահողը իր հոգին նեղութիւններէ կը պահէ. Առակ. ԻԱ. 23: (Տես նաեւ ԺԳ. 3): Եթէ մէկը խօսքով յանցանք չընէ՝ անիկա կատարեալ մարդ է. Գալ. Գ. 2:

Գատարկ տեղը մի խօսիք

Առակ. Ժ. 19—Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ:

Մատթ. ԺԲ. 36, 37—Ամէն դատարկ խօսքի համար զոր մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշիւ պիտի տան:

Թեմեւորէն մի խօսիք

Եփես. Ե. 3, 4—... 2 յիշուի ձեր մէջ... զարշելի բաներ կամ յիմարական խօսքեր, կամ խեղկատակութիւն որ չվայելեր: Վիճաբանութեանց պատճառ մի ըլլաք

Առակ. Զ. 16-19—Տէրը... կը զգուի, ու Անոր Հոգւոյն առջեւ... պիղծ է... եղբայրներու մէջ կոխ ցանող մարդ:

Բ. Տիմ. Բ. 14—... Խօսքերու վրայ վէճ չընել, որ բանի մը օգտակար չէ, հապա միայն խողներուն կործանումին համար է: (Տես նաեւ Բ. 23, Տիմ. Գ. 9):

Շողոքորթութիւն մի ընէք

Առակ. ԻԹ. 5—Իր ընկերին շողոքորթութիւն ընող մարդը անոր քայլերուն որոգայթ կը լարէ:

Ծաղր մի ընէք

Առակ. Ժէ. 5—Աղքատը ծաղր ընողը անոր
Ստեղծիչը կ'անարգէ:

Սաղ. Ա. 4—Երանելի է այն մարդը որ... ծաղր
ընողներուն նստած տեղը չնստիր:

Առակ. ԺԺ. 29—Ծաղր ընողներուն համար
դատաստաններ... պատրաստուած են:

Զարախօսութիւն մի ընէք

Յակ. Դ. 11—Մէկգմէկ մի բամբասէք:

Ա. Պետ. Բ. 1, 2—Մէկգի ձգելով... ամէն չա-
րախօսութիւնը... բանական ու անխար-
դախ կաթին փափաքեցէք:

Սուտ մի խօսիք

Ելից Ի. 16—Բու դրացիիդ դէմ սուտ վկա-
յութիւն մի ընէր:

Ղեւտ. ԺԺ. 11—Սուտ մի գրուցէք եւ
մէկգմէկ մի խարէք:

Սաղ. ԼԴ. 13—Պահէ... շրթունքներդ նեն-
գութիւն խօսելէ:

Առակ. ԺԲ. 22—Սուտ շրթունքը Տէրոջը
զգուհի է:

Կող. Գ. 9—Իրարու սուտ մի գրուցէք, հին
մարդը իր գործերովը ձեր վրայէն հանեցէք:

Եփա. Դ. 24, 25—... ձգամարիտ սրբութիւնով...
ուստի ստութիւնը մէկգի ձգելով ճշմար-
տութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ըն-
կերին հետ, վասնզի մենք իրարու
անգամներ ենք:

Մի զրպարտէք

Ղեւտ. ԺԺ. 16—Բու ժողովուրդիդ մէջ չա-
րախօսութիւն ընելու չպտտիս:

Կող. Գ. 8—Մէկգի ձգեցէք... անհամեստ խօս-
քերը ձեր բերաններէն:

Մի նախատէք

Ա. Կոր. Զ. 9, 10—Մի խարուր... նախատող-
ները... Աստուծոյ թագաւորութիւնը

պիտի չժառանգեն:

Մատթ. Ե. 22—Ով որ իր եղբորը յիմար ըսէ
ատեանի պարտաւոր պիտի ըլլայ:

— Ով որ իր եղբորը անմիտ ըսէ,
գեհենի կրակին պարտաւոր պիտի ըլլայ:

Ա. Պետ. Գ. 9—Չըլլայ որ... հատուցանէք նա-
խատինքի փոխարէն նախատինք, այլ

ընդհակառակն օրհնեցէք:

Ա. Կոր. Դ. 12—Երբ մեզ կը նախատեն
կ'օրհնենք:

Մի անիծէք

Ղուկ. Զ. 27—Ձեզ անիծողները օրհնեցէք:
Հռով. ԺԲ. 14—Ձեզ հալածողները օրհնեցէք,
օրհնեցէք ու մի անիծէք:

Յակ. Գ. 9, 10—Անով (լեզուով) կ'օրհնենք
զԱստուած ու Հայրը, եւ անով կ'անիծենք
մարդիկ որոնք Աստուծոյ նմանութիւնովը
ստեղծուած են. միեւնոյն բերնէն կ'ելլեն
օրհնութիւն ու անէծք. եղբայրներս պէտք
չէ որ այս աշուպէս ըլլայ:

Մի դատէք

Մատթ. Է. 1—Մի դատէք:

Ա. Կոր. Դ. 5—Ժամանակէն առաջ դատողու-
թիւն մի ընէք, մինչեւ գայ Տէրը:

Յակ. Դ. 12—Միայն մէկ... Դատաւոր կար...
դուն ո՞վ ես որ ուրիշը կը դատես:

Մի տրանջէք

Ողբ. Գ. 39—Ապրող մարդը ինչո՞ւ տրանջ
ընէ: Մարդը իր մեղքերուն վրայ թող

տրամի: (լուսանցք)

Ա. Կոր. Ժ. 10—Եւ տրաւունջ չընէք, ինչպէս
անոնցմէ ոմանք տրաւունջ ըրին ու սատակիչէն

ջարդուեցան:

Փիլ. Բ. 14—Ամէն բան առանց տրաւունջ-
ներու... ըրէք:

Յակ. Ե. 9—Իրարու դէմ մի հառաչէք եղբայր-
ներ, որպէսզի չդատապարտուիք:

Մի պարծեմաք

Երեմ. Թ. 23—Տէրը այսպէս կ'ըսէ, իմաստու-
նը իր իմաստութիւնովը չպարծի, հարուս-
տը իր հարստութիւնովը չպարծի, զօրա-
ւորը իր զօրութիւնովը չպարծի:

Ա. Կոր. Դ. 7—Ո՞վ է ան որ քեզ տարբեր կ'ը-
նէ ուրիշներէն, եւ ի՞նչ ունիս զոր չես ա-
ռեր դուն, եւ կ'ի՞նչ առիր՝ ինչո՞ւ չառածի
պէս կը պարծենաս:

Պուտ երգում մի ընէք

Ղեւտ. ԺԺ. 12—Իմ անունովս սուտ տեղը եր-
գում մի ընէք, ու ձեր Աստուծոյն անու-
նը մի պղծէք, ես եմ Տէրը:

Ամենեւին երգում մի ընէք

Մատթ. Ե. 34-37—Բայց ես ձեզի կ'ըսեմ, ա-
մենեւին երգում մի ընէք... հապա ձեր
խօսքը ըլլայ այսո՞ւն այս, եւ ոչը՝ ոչ:

(Տես նաեւ Յակ. Ե. 12)

Տէրը մի ուրանաք

Մատթ. Ժ. 32, 33—Արդ ով որ մարդոց առջև
զիս կը դառնի ես ալ դանիկա պիտի

դառանիմ Իմ Հօրս առջեւ որ երկինքն է:

Եւ ով որ մարդոց առջեւ Զիս զ'ուրանայ,
եւ ալ դանիկա պիտի ուրանամ Իմ Հօրս

առջեւ որ երկինքն է:

Այս բաներուն ո՞վ բաւական է: Ով Տէր պոհապան:
Իր իմ բերնիս, շրթունքներուս դուռը պահպանէ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՏՈՒՅ ՄՕՆՕ

ԼՈՅՍԸ ԿԸ ՅԱՂԹԻ ԽԱԽԱՐԻՆ

Մեր նախորդ յօդուածին մէջ տեսանք թէ Ատուլի Մօնօ Նափուլիի մէջ իր առաջին հովուական պաշտօնին սկսաւ յուսալով որ հոգեւոր գործը պիտի նպաստէր յաղթելուն՝ իր ներքին տագնապին — կրօնական տարակոյսներուն, սակայն չարաչար սխալեցաւ: Իր պաշտօնավարութեան սկսելէն ասան մը ետքը կը գրէր. —

«Իմ յուսացածիս բոլորովին հակառակը պատահեցաւ: Իմ անփորձութիւնս, ագիտութիւնս եւ երկչոտութիւնս, իմ յարաբերութիւնս անհաւատներու հետ, որոնց դէմ ես կը մարտնչէի... եւ մասնաւորաբար իմ հօգույս ինքնածին խրոսովեալ վիճակը՝ խորէն ցնցեցին իմ հաւատքս: Երբ մեղմացաւ առաջին սարսափը, որ իմ մէջս ծնաւ այս վիճակիս տեղեակ ըլլալէս յետոյ... ջանացի յստակ գաղափար մը կազմել թէ ինչ դիրք բռնելու էի. մէկ կողմէն չէի կրնար առանց հովիւի ձգել նորահաստատ եկեղեցին, իսկ միւս կողմէն մնալովս կը վտանգէի Տէրոջմէ ինծի վստահուած հոգիներու փրկութիւնը, եթէ անոնց փոխանակ Աւետարանը քարոզելով իմ գաղափարներս կամ տարակոյսներս պարզէի»:

Երկար խորհրդածութենէ ետք վճռեց քարոզել Աւետարանի վարդապետութիւնները, խնդիր չէր թէ ինքը անոնց կը հաւատար կամ ոչ. և կը յուսար թէ ատով վերջապէս պիտի փարատէին իր կասկածները. սակայն դարձեալ յուսախար եղաւ: Կը գրէ, «Ատով իմ անձս շատ աւելի անգութ տուայտանքի մը ենթարկեցի, քանզի մըտքի անհաւատութենէ ինկայ սրտի անհաւատութեան մէջ. քիչ ետք յոգնեցայ այն գործէն, որուն համար յոյս եւ սէր չունէի. ինծի ամենէն մեծ ցաւը կը պատճառէր՝ եկեղեցւոյն մէջ եւ պատանեաց կրօնի դասին ասան վարդապետութիւններ սորվեցնել, որոնցմէ... կախում ունի մարդկութեան փրկութիւնը, որոնց համար ես սակայն ո՛չ ըմբռնում և ո՛չ ալ համոզում ունիմ: Ինչպէ՞ս կրնամ ուրիշներու յանձնարարել Սուրբ Գիրք կարդալ, եթէ ինծի համար անկարելի է անոր ճշմարտութիւնը ընդունիլ: Այս տառապանք մըն է որ զիս այնքան կը ճնշէ որ շարաթներէ ի վեր դայն ըացած չեմ: Ես փորձած եմ քաջ սրտով ինքզինքս ժողովել, լալահառաջ աղօթքով ձեռքերս դէպի Աստուած բարձրացու-

ցած եմ. բայց կարծես թէ զիս կը լքէ ամէն մը-խիթարութիւն, ամէն լոյս եւ նոյնիսկ ամենափոքր քաջալերութիւնը: ...Կարճ խօսքով իմ անմիտ, հիւանդագին մեղամաղձոտութիւնս ինծի այնպէս յաղթած է որ ես զայն անպարտելի կը նկատեմ: Այլեւս չեմ կրնար հաւատալ իմ կամքիս զօրութեանը. այո, նոյնիսկ կը կասկածիմ Աստուծոյ սիրոյն: Անկարելի է իր ամենողորմութիւնը հաշտեցնել այն մութ ուժերուն հետ, որոնք իմ երջանկութիւնս կը խեղդեն եւ իմ ընդունակութիւններս, խիղճս ու բարեպաշտութիւնըս գերի կ'ընեն իմ մոլեգին երեւակայութեանս:

Այդ անելի տարակուսանքի եւ տուայտանքի օրերուն, 1827ի գարնան, իրեն այցելութեան եկաւ իր անգլիացի հաւատացեալ բարեկամներէն մին՝ Թոմաս Էրսքին: Մօնօ, որ իր ցաւը ամէն մարդէ կը ծածկէր եւ կը խուսափէր անոնց հետ յարաբերելէ, այժմ պատենութիւն ունէր իր սիրտը բանալու եւ իր վիշտը լալու: Յաճախ երկուքը միասին կը պտըտէին Նափուլի ծովախորշին եզերքը՝ ծաղկալից ծառերով եզերուած ճամբաներու վրայ. կը դիտէին կապոյտ երկնակամարը եւ փառաւոր վերջալոյսն ու արշալոյսը:

Անգամ մը Էրսքին ըսաւ, «Ո՛հ, որքա՛ն քաղցրը է լոյսը, եւ որչա՛փ սիրելի աչքերուն տեսնել արեգակը»:

Ատուլի Մօնօ պատասխանեց հառաչանքով, «Դուն լուսոյ մէջ ես. քու սրտիդ ուրախութիւնը կը նմանի սա ծովուն, ուր արեւին ճառագայթները կը խորասուզին. բայց քու էութիւնդ այս պայծառութիւնը աւելի սարսափելիօրէն կը ցուցնէ ինծի իմ ներքին պատռուածքս»:

Բարեկամը իրեն պատասխանեց, «Միայն ըսպասէ քու լոյսիդ ծագմանը, ան կուգայ, Տէրօջը փառքը դեռ պիտի ծագի՝ քու վրադ»:

Ատոր վրայ Մօնօ նոր խրախոյս ստացաւ եւ գրի առաւ հետեւեալ սրտաբուլիս աղօթքը. —

«Ով ճշմարտութեան Աստուած, Դուն չես կրնար ինձմէ ծածկել ճշմարտութիւնը: Քու խօսքըդ իր բոլոր խոստումներովդ կ'երաշխաւորէ ինծի թէ Դուն դայն ինծի պիտի յայտնես: Պէտք է որ զայն ըսեմ իմ կրօնի դասիս աշակերտներուն սիրոյն, ինծի վստահուած հոգիներու սիրոյն եւ ի սէր այն զոհողութեան, զոր ես ամէն օր կը բերեմ Քեզի՝ հոս իմ պաշտօնիս վրայ ըսպասելով: Ուստի միայն Քեզի կը վստահիմ... Արդէն հիմակունէ այնպէս պիտի ապրիմ՝ իբր թէ բոլորովին ապահով եմ թէ՛ ապագային կատարելապէս պիտի յայտնես ճշմարտութիւնը:

Ձայն պիտի փնտռեմ հոն, ուր կրնամ գտնել ըստուգապէս, այսինքն Սուրբ Գրոց մէջ եւ նաեւ անոնց քով, որոնք մեկնած են Աստուածաշունչը հաւատարիմ եւ անխարդախ կերպով: Ղեկավարէ իմ փնտռողներս եւ գտնել տուր ինծի ճշմարտութիւնը, որ սրբացման կը ծառայէ... օգնէ ինծի գրեզ ամբողջ սրտովս փնտռել ու գրտնել տուր ինքզինքդ: Մի թողուր ոեւէ բանով բաժնուիլ աստուածավախութենէ, որ պէտք է մնայ առաջինն ու վերջինը իմ բոլոր փնտրողներուս և խուզարկութիւններուս: Սրբէ գիս Քու ճշմարտութիւնովդ, Քու խօսքդ ճշմարտութիւն է»:

Սակայն լոյսը, որուն գալուստը այնքան մօտալուտ թուած էր Մօնոյի պահ մը, շուտով չը ծագեցաւ: Ընդհակառակն, քիչ ետքը, —էրսքինի մեկնումէն յետոյ— խաւարը աւելի թանձրացաւ եւ կը սպառնար մեղամաղձոտութեան անգութ ճիրաններուն մէջ խեղդել զժբաղդ Մօնոյի կեանքը:

Մտադրած էր իր այս ներքին տառապանքին մասին բան մը չգրել իր սիրելի մօր, որ հեռակայ Փարիզի մէջ կը հալէր ու կը մաշէր իր որդւոյն այս վիճակին համար: Բայց չկրցաւ տոկալ ու դարձեալ բացաւ անոր իր սիրտը.—

«Իմ նեղութեանս մէջ կրկին ու կրկին կրօնի կը դիմեմ: Եթէ այս վերջին յոյսս ալ զիս լքէ, ինծի բաժին պիտի մնայ միայն յուսահատութիւնը: Սակայն եթէ հաւատքի հասնիմ, ապահովաբար պիտի գտնեմ նաեւ խաղաղութիւնը... ուստի հիմա միայն մէկ աղօթք ունիմ, զոր յաճախ կը կրկնեմ.—

«Ով ամենակարող Հոգի, Որ ինծի իմ հոգիս ներշնչած ես, ո՛վ Արարիչ ու կառավարիչ բոլոր ապրող էակներու, ողորմէ՛ ինծի, իմ հոգւոյս մէջ ամբողջովին մութ, ամայի ու պարա՛պ է. ան իր ամբողջ հաւատքը, ամբողջ յոյսը, ամբողջ սէրը կորսնցուցած է, բայց քանի որ Քու ողորմութիւնդ անչափելի է, իմ անբացատրելի թշուառութիւնս Քու առջեւ կը բերեմ: Տո՛ւր ինծի զայն, ինչի որ կը կարօտիմ, ինչ որ է այդ, ես անձամբ չեմ գիտեր, սակայն Դուն գիտես: Եթէ պէտք է որ իմ սիրտս դեռ պատրաստուի՝ այդ Քու պարզեղ ընդունելու համար, այդ պատրաստութիւնս ալ դուն կատարէ Քու ներգործութեամբդ, քանզի ես աղքատ ու թշուառ եմ»:

Այս լալահառաչ աղօթքները մեզի կը յիշեցնեն Յակոբի մարտնչումը, «Ձեմ թողուր Քեզ մինչեւ զիս չօրհնես» (Ծննդ, ԼԲ. 24-30): Եւ ինչպէս Աստուած ինքզինքը Անոր յայտնեց, ու կը

յայտնէ նաեւ բոլոր անոնց, որոնք անկեղծօրէն իր երեսը կը փնտռեն, նոյնպէս ալ չէր կրնար անտես ընել Մօնոյի խնդիրքը: Անկէ, ինքզինքը ծածկեց միայն ատեն մը, որպէսզի անիկա իր էութեան խորքին մէջ զգար թէ դա՛ռն է ապրիլ Աստուծոյ հետի, և որպէսզի յետոյ՝ իր պաշտօնավարութեան ընթացքին կարենար կարեկից ու իմաստուն առաջնորդ մը ըլլալ բոլոր անոնց, որոնք մոլորած են տարակոյսներու մառախուղին մէջ: Երբ Տէրը հասած էր իր այդ նպատակին, «յորդահոս սիրով բացաւ իր սիրտը» Մօնոյի, «որ փշրուած իր ոտքն ինկած էր եւ չէր թողուր իր զգեստին քղանցքը»: Երբ անիկա կէս զիշերուան խաւարով շրջապատուած ըլլալ կը կարծէր, յանկարծ ծագեցաւ արեգակը, եւ այդ տեղի ունեցաւ հետեւեալ պարագաներու տակ.—

Ամառնային շքեղ առաւօտ մըն էր. Մօնօ կը քալէր Նափուլիի փողոցներուն մէջ՝ այցելութեան մը նպատակաւ: «Իր շուրջը նոճիները կը սօսափէին մեղմօրէն, վարդերը կը շիկնէին ու անուշ բուրում կ'արձակէին խորհրդաւոր պարտէզներու մէջէն եւ մարմարեայ ցալապարիւրներու մէջ կը խայտային ականակիտ ջրերը: (Մօնօ) իր մտքին մէջ կը խորհէր, Ով Աստուած, ինչպէս զարգարած ես Քու երկիրդ եւ ձեռակերտած ստեղծագործութիւնդ:

«Սակայն մագ մնաց որ այս յորդահոս լոյսին մէջէն դուրս՝ դարձեալ դէպի անսահման տըխրութեան և թախծութեան զիշերը ցատկէր: Բայց յանկարծ երկնային ուժով մը զինք յափշտակեց խորհուրդ մը»(1), որ ցրուեց տարակոյսի ամպերը եւ ի յայտ բերաւ արեգակը: Այդ էր Ա. Կոր. ԺԲ. 3 համարը, «Մէկն ալ չկրնար Յիսուսը Տէր կոչել, եթէ ոչ Հոգւով Սրբով»:

Մօնօ այդ խօսքը նկատեց իբր սգաւորարար պարան մը՝ նետուած իրեն —հաւատացեալին— Աստուծոյ սէրէն, բռնեց զայն ու կախուեցաւ անկէ: Վայրկեան մը խորհեցաւ, տաք ձեռքերովը շփեց իր սեւ մազերը, խորունկ շունչ մը քաշեց եւ ապա ետ դարձաւ: Շիտակ տուն գնաց եւ ջերմեռանդ աղօթքով աղերսեց Սուրբ Հոգւոյն լոյսը, որպէսզի ան լուծէ իր ներքին առեղծուածը»:

Այս իր դարձին մասին Մօնօ իր եղբօրը զըրած է, «Տուն վերադարձած՝ իմ շարժումներս ոռոգեցի արցունքի հեղեղներով, ծնրադրեցի, եւ հոգիի արտակարգ տազնապիս մէջ Տէրոջը աղաչեցի: Այդ ժամէն ի վեր կրնամ անդադար ա.....

(1) A. Roth, Adolf Monod էջ 23, 24

դօթել եւ Աստուծոյ խօսքը կարգաւ կատարեալ հաւատքով... վերջին 9 օրերուն մէջ մէկ աղբիւր-թարթ իսկ մեղամաղձտութենէ տառապած չեմ:

«Դիւրութիւնը, որով ես կարճ ժամանակի, նոյնիսկ մէկ քանի օրուան մէջ անհաւատութե-նէ հաւատքի անցայ, ճիշդ այդ դիւրութիւնը յստակ ապացոյց մը կուտայ թէ այս բանը Աս-տուծոյ գործն էր իմ Հոգւոյս մէջ»...

Իսկ իր քոյրերէն միոյն գրած նամակին մէջ կը կարդանք, «Այդ ատեն կարծես երկնային լոյսի ճառագայթ մը ինծի յայտնեց թէ իմ միտ-քըս կուրութեամբ խաւարած է եւ թէ ես բռնը-ւած եմ մոլորութենէ մը, որ վերցուելու է, եթէ կ'ուզեմ խաղաղութիւն ունենալ: Ծանշցայ թէ իմ բանականութիւնովս ու կամքիս ուժովը եր-բեք չպիտի կրնամ գործել... Օգնութիւնը կրնար գալ միայն ինծմէ դուրս գտնուող ազգակէ մը: Այդ միջոցին յիշեցի Մխիթարիչի մը, Սուրբ Հո-գւոյն մասին եղած հոստումը... ես հաւատացի իրական, արտաքին եւ գերբնական ներգործու-թեան մը, որ ի վիճակի էր կառավարել ու վե-րանորոգել իմ խորհուրդներս ու զգացումներս թէ՛ տալու եւ թէ՛ ընդունելու մէջ. ներգործու-թեան մը որ պէտք է բոլորի Աստուծմէ, Որ Իշ-խանն է թէ՛ իմ սրտիս եւ թէ ընդարձակածա-ւալ բնութեան:

«Ո՛հ, երջանիկ է այն սիրտը, որուն վրայ Ա-նիկա կը բանեցնէ այդ իշխանութիւնը... որքա՛ն բացարձակ, այնքան աւելի թանկարժէք: Սա-կայն իր իշխանութիւնը գործածելու համար Տէ-րը կը պահանջէ մարդկային սրտի յօժարակա-մութիւնը...: Խորամուկս մտածումով մենք որոշա-պէս կ'ըմբռնենք թէ ամէն բան Աստուծմէ կը բղխի... եւ թէ մեր հոգւոյն մէջ օրհնութեամբ կը պսակուին միայն այն ջանքերը զորս Ինքն անձամբ մեր մէջ գրած է...:

«Արդ, ես առաջին քայլը առի: Ամբողջ սեփա-կան ոյժս ու արժանիքս, ամբողջ անձնական շահս լքեցի, եւ կոչ ընելով միայն իմ անձնական ողորմելիութեանս՝ անձնատուր եղած եմ Անոր գթութեանը: Ես խնդրեցի Անոր Հոգին, որպէսզի Անիկա իմ հոգիս վերանորոգէ»:

Եւ Ան գինքը վերանորոգեց, վերստին ծնաւ, ուստի իրաւունք ունէր Յովհաննէս Առաքեալի հետ ցնծութեամբ աղաղակելու, «Կեանքը յայտ-նըեցաւ, ու տեսանք եւ կը վկայենք ու ձեզի կը պատմենք այն յաւիտեանական կեանքը որ Հօրը քով էր ու մեզի յայտնուեցաւ: Զայն որ տե-սանք ու լսեցինք ձեզի կը պատմենք»: Ատկէ ետքը իր բոլոր քարոզները վկայութիւններ էին

երկու խորունկ ճշմարտութիւններու նկատմամբ. առաջին՝ ահաւոր, դժոխային է այն մարդուն կեանքը, որ զրկուած է Աստուծոյ երեսէն: Երկ-րորդ՝ կատարեալ ուրախութեան ճամբան զաւա-կական հաղորդութիւնն է Աստուծոյ հետ: Այս վկայութիւնները կը բղխէին իր ամենէն խորունկ փորձառութենէն, ապրումէն: Ուստի Մօնոյի քա-րոզները հատու էին երկսայրի սուրբի մը նման: Աստուծոյ այս օծեալ ծառան քանի՛ մարդոց օգնած է՝ անհաւատութեան դժոխքէն կա-տարեալ ուրախութեան մէջ մտնելու: Տէրը սը-խալ չըներ երբեք. գիտէր ինչո՞ւ Մօնոն նախ տարակոյսներու եւ ներքին տագնապներու բո-վին մէջ մնալու էր ատեն մը:

X X X

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ՀԱՍԿԱՔԱՂ

ԱՍՏՈՒԱԾԱՎԱՍԽ ՏՂԱՅ Մ'Ը

12 տարեկան տղայ մը Պօղոս անունով բամ-պակի գործարանի մը մէջ կ'աշխատէր: Շաբա-թը 30 ֆրանք կը շահէր եւ այս դրամը զրեթէ միակ հասոյթն էր իր հիւանդ մայրիկին: Պօղոս շատ շատ կը սիրէր իր մայրիկը եւ կը հնազան-դէր անոր: Անիկա ամէն կիրակի ժողովարան ալ կ'երթար: Դժբաղդաբար իր գործի բաթօնը ան-հաւատ եւ ամբարիշտ մէկն էր: Շաբաթ օր մը շատ գործ ստանալով՝ գործաւորներուն ապապը-րեց անպատճառ կիրակի օրն ալ գալ եւ աշխա-տիլ: Պօղոս թէեւ վայրկեան մը դանդաղեցաւ, բայց վերջապէս որոշեց կիրակին չաղծել, թէեւ կը վախնար որ գինքը գործէն կը հանեն եւ իր խեղճ մօրը վիճակը թշուառ պիտի ըլլար. բայց որոշեց իր խղճին հնազանդիլ եւ մնացածը Աս-տուծոյ ձգել: Ուստի նա կիրակի օրը եկեղեցի գնաց եւ կիրակին սուրբ պահեց: Յաջորդ առ-տու երբ գործի գնաց, բաթրոնը հարցուց.—

«Երէկ ո՞ւր էիր»:

—Եկեղեցի գացի, պատասխանեց Պօղոս:

«Լաւ ուրեմն, այսօր ալ եկեղեցի գնա, այլեւ քեզի պէտքը չունիմ», ըսաւ նա խստութեամբ:

Խեղճ Պօղոս, որքան ախուր եւ յուսահատ տուն վերադարձաւ: Երբ իր մօրը վրայ մտածեց, չկրցաւ արցունքները բռնել: Յետոյ խորհեցաւ որ լալը անօգուտ է, ուստի անմիջապէս աչքերը սրբելով հաստատ որոշումով մը սկսաւ նոր գործ

մը փնտռել: Շատ մը տեղեր դիմեց եւ գործ խնդրեց բայց ամէնն ալ կ'ըսէին, «Դեռ շատ պզտիկ ես աշխատելու համար, քու տարիքդ եղող տղոց գործ չենք տար»:

Վերջապէս բաթրօն մը հարցուց իրեն թէ ի՞նչ պատճառաւ բամպակի գործարանէն ելած էր: Պօղոս կատարեալ պարզմտութեամբ պատմեց անցած դէպքը, որուն վրայ այս պարտնը որ բարեպաշտ մըն էր, պատասխանեց,

«Բա՛լ եղիր տղաս, ես քեզի գործ կուտամ եւ շաբաթը 60 ֆրանք պիտի շահիս»: Այդ օր տղան գործի մտաւ:

Աստուած այսպէս կ'օրհնէ եւ կը ծաղկեցնէ զանոնք որ Իրեն հաւատարիմ կը մնան:

«Տէրոջը յանձնէ քու ճամբարդ, եւ Անիկա պիտի տայ քեզի քու սրտիդ խնդրուածքները»:

«Տղայ էի ու ծերացայ, բայց արդարեւ անտես եղած չտեսայ, կամ անոր զաւակը հաց մուրացող» (Սաղ. ԼԷ. 25):

ՊԶՏԻԿ ԱՂԶԿԱՅ ՄԸ ՏՈՒԱԾ

ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Ձմեռուան շատ ցուրտ օր մը երբ երկիրը ձիւնով ծածկուած էր ու պզտիկ թռչունները ուտելիք չէին գտներ, հարուստ բայց կծծի մարդու մը պզտիկ աղջիկը սեղանին ամբողջ փռշտանքները հաւաքեց եւ գնաց զանոնք ձիւնին վրայ ցանկել թռչնիկներուն համար: Հայրը զայն տեսաւ ու ըսաւ, «Ի՞նչ անօգուտ բան է ըրածդ աղջիկս, քու փշրանքներդ եկող թռչուններուն հարիւրին մէկ հատն իսկ չեն կրնար կշտացնել»:

—Դիտեմ հայրիկ, պատասխանեց մանուկը, թէ չեմ կրնար ամենուն հատնիլ, բայց եթէ կարենամ Աստուծոյ ստեղծած այս պզտիկ արարածներէն մէկ հատին կեանքը փրկել, շատ ուրախ պիտի ըլլամ:

Հայրը յանկարծ ինքզինքին եկաւ: Նա գիտէր թէ դիւղին մէջ շատ մը աղքատներ կը առաւապէին, եւ ինք անոնց ունէ մէկին օգնել չէր ուզած այն պատճառակաւ թէ ամենուն չէր հասներ: Այս վայրկեանին իր խիղճը զօրաւոր կերպով զինք յանդիմանեց եւ աղջկան ըսաւ, «ամբողջ հաց մը փշրէ եւ թռչնիկներուն տար, ես ալ երթամ քանի մը հատ խեղճ գիւղացիներուն ցրուել»:

«Աղքատին ոգորմութիւն ընողը Տէրոջը փոխ կուտայ, ու Անիկա առատապէս հատուցում պիտի ընէ»:

ԱՄԵՆԷՆ ԳԵՂԵՑԻԿ ԳԻՐԲԸ

Ավէյրօնի լեռներէն դիւղի մը մէջ բնակող պզտիկ աղջիկ մը կար որ շատ կը փափաքէր Սուրբ Գիրք մը ունենալ: Իժրադաբար հոն ունէ գրածախ չկար:

Օր մը նա իմացաւ թէ Նիմի մէջ կարելի է երեք ֆրանքով ազուոր Սուրբ Գիրք մը գնել: Անմիջապէս միտքը դրաւ երթալ անձամբ Սր. Գիրք մը ծախու առնել: Երկու նապաստակ ունէր նուէր ստացած, եւ քանի որ զրամ չունէր՝ զանոնք առաւ ու ճամբայ ելաւ 25 մղոն հեռու Նիմ քաղաքը երթալու:

Երբ իր ուխտագնացութեան տեղը հասաւ՝ գրածախ մը փնտռեց եւ խնդրեց անկէ որ իր նապաստակները առնէ եւ անոնց տեղ իրեն Ս. Գիրք մը տայ: Սուրբ Գիրքը թելին տակ վերջին ծայր ուրախութեամբ, ամենէն թանկագին գանձ մը գտած իր գիւղը վերադարձաւ: Հոն ամէն օր կարդալով Ս. Գիրքը թէ այս սիրելի զաւակին եւ թէ իր շուրջը գտնուողներուն անըսւած մխիթարութեանց աղբիւր մը եղաւ, եւ ամէն ուր որ այցելէր կը կրկնէր Տէր Յիսուսի սիրով լեցուն խօսքերը:

ԳԻՐԲԵՐԸ ՔՆՆԵՑԻՔ

Աստուածավախ կին մը օր մը մահամերձ երիտասարդ աղջկան մը այցելեց:

«Ձաւակս, ի՞նչ է այս ժամուս քու ամենամեծ սիրելի փափաքդ»:

—Ով Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ, ե իմ ներսիցիս ուղիղ հոգի նորոգէ Սղ. 51 10:

«Մահէն չե՞ս վախնար» հարցուց այցելուն:

—Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պըարտիմ, չարէն պիտի չվախնամ, վասնզի Դուն ինձի հետ ես, Գու ցուպդ ու գաւազանդ, անոնք զիս պիտի մխիթարեն Սաղ. ԻԳ. 4:

«Չե՞ս վախնար թէ մեղքերէդ քանի մը հատը դեռ կրնան ներուած չըլլալ»:

—Եթէ լոյսի մէջ քալեմք, ինչպէս Անիկա լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք, ու Անոր Որդոյն Յիսուս Բրիտանի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ, Ա. Յովհ. Ա. 7: Այս էր վերջին եւ վստահ պատասխանը մեռնող աղջկան: Այս պզտիկ դէպքը մեզի կը ցուցնէ նախ մահուակ հասակէն միտքը Սուրբ Գրքի համարներ զոյ պահելու կարեւորութիւնը, ե յետոյ թէ ինչ կ'արժէ Աստուծոյ եւ Աւետարանին վրայ մեր հաւատքը մահուան գերազոյն ժամուն:

«Ո՛Ձ» ԸՍԵԼ ՍՈՐՎԵՑԻՔ

Երիտասարդ մը որ մեծ յանցանքի մը հա-
մար մահուան դատապարտուած էր՝ դատապար-
տութենէն օր մը առաջ իրեն այցելող բարեկա-
մի մը աշպէս ըսաւ.—

«Իմ մեծ յանցանքս ան է որ ես երբեք ոչ
չկըցայ ըսել անոնց որ զիս չար ճամբաներ տա-
նել կ'ուզէին: Եթէ առաջին անգամին իմ խղճիս
հակառակ արարքի մը քաշել ուզած ատեննին
գիտնայի ոչ ըսել՝ ցարդ ըրած բոլոր ոճիրներէս
ոչ մէկն ալ ըրած պիտի չըլլայի: Ընկեր մը ու-
ղեց որ իրեն ընկերանամ՝ ոճիր մը գործելու, ես
ալ ընկերացայ եւ այսօր իմ մեղքիս պատիժը
կը կրեմ»:

«Մի խաբուիք, չար ընկերակցութիւնները
աղէկ բարքը կ'ապականեն» (Ա. Կոր. ԺԵ. 33):

ՄԱՆԿԱՆ ՄՐ ԱՂՕԹՔԸ

Անգամ մը սիրելի պզտիկ տղու մը մայրը
յանկարծ հիւանդացաւ: Մանուկը աղաչեց որ
իրեն թոյլ տրուի մայրիկին քով երթալ, և հա-
զիւ թէ սենեակէն ներս մտցուցին զայն՝ առանց
նկատի առնելու մայրիկին մահիճը շրջապատող
բժիշկը եւ ուրիշները, նա ծուռկի եկաւ եւ պարզ
ու յուզիչ կերպով Աստուծոյ խնդրեց զայն բը-
ծչել, եւ այսպէս վերջացուց իր աղօթքը.—

«Ո՛հ, մայրիկս ինձմէ մի առնէր, ի՛նչ պիտի
ընեմ ես առանց մայրիկիս»:

Յետոյ ոտք ելլելով մօրը մօտեցաւ եւ ըսաւ,

«Հիմա աւելի լա՛ւ ես, սիրելի մայրիկ»:

—Այո, պզտիկ Ալֆրէտս:

«Ո՛հ, գոչեց ուրախ մանուկը, Աստուած նոյն-
իսկ պզտիկ տղու մը աղօթքը կը լսէ, այնպէս
չէ՞ մայրիկ»:

«Թող տուէք այդ մանր տղոցը որ Ինձի գան,
եւ մի արգիլէք ատոնք, վասնզի երկինքի թա-
գաւորութիւնը այդպիսիներուն է» ըսած է Փըր-
կիչը: (Մարկ. Ժ. 13):

ՄԱՆԿԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Կիրակնօրեայ դպրոցի մը մէջ մանուկներուն
հարցուեցաւ թէ կրնայի՞ն յիշել տեղ մը ուր
Աստուած չէր գտնուէր:

Մանուկ մը ելաւ ու ըսաւ, «Աստուած չա-
րերուն խորհուրդին մէջ ներկայ չէ»:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖԲԱՆՍՍԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ

Զ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ֆրանսայի Հայ Աւետ. եկեղեցիներու Զ. հա-
հագումարը տեղի ունեցաւ Լիօնի մէջ Օգոս. 29էն
Սեպ. 4 1933: Միութեան ժողովին կը մասնակե-
ցէին,

Մարտէլէն.—

Վեր. Յ. Ն. Ղազարոսեան, եղբ. Կ. Պատաք-
եան, Ա. Գասպարեան, Լ. Սիմոնեան:

Սէն Լու.—

Աւետարանիչ Վ. Սահակեան:

Լա Սիօթա.—

Աւետարանիչ Ս. Պազգալեան:

Վալանս եւ Ռօման.—

Բրօֆ. Գ. Խայրիկեան, եղբ. Գ. Կիւրեղեան:

Օպէնաս Արտէշ.—

Պատ. Ա. Փափագեան, եղբ. Մ. Սազալեան:

Լիօն.—

Պատ. Ժ. Պարսումեան, եղբ. Լ. Նիկողոս-
եան Ե. Յակոբեան:

Սէնթ. Էթիէն.—

Աւետարանիչ Ի. Աբրահամեան, եղբ. Յ. Աբ-
րահամեան:

Ալֆօրվիլ.—

Վեր. Մ. Տէր Սահակեան:

Բարիք.—

Պատ. Զ. Պուտաքեան, եղբ. Յ. Եսփուճեան:

A. C. O. ի իբր ներկայացուցիչ մասնակցե-
ցան Միսիոնին Տնօրէնը Վեր. Dr. P. Berron,
փոխ նախագահ Dir. Studle եւ գանձապահ
Prof. L. Kuehm.

Ժողովականները սկսան հասնիլ Բ. շք. օրը եւ
նոյն գիշերն իսկ գործակիցներու սեղմ շրջանա-
կի մը մէջ տեղի ունեցաւ նախապատրաստա-
կան տաքուկ աղօթաժողով մը, Տէրոջը ներկա-
յութիւնը եւ օրհնութիւնը հայցելու յառաջիկայ
օրերուն վրայ:

Օրը երկու անգամ ժամանակ տրուեցաւ հո-
գեւոր խորհրդածութեանց եւ աղօթաժողովներու:
Առաւօտները Dir. Studle եւ կէս օրերէն յե-
տոյ Dr. Berron առաջնորդեցին այս ժողովնե-
րուն, մեկնելով եւ կեդրոնանալով Բ. Տիմ. Թող-
թին ու Կողա. Բ. գլխուն վրայ: Մեր սիրելի երէց
եղբայրները իմաստալից եւ գործնական կերպով
մը պարզեցին հոգեւոր գործիչներու առանձնա-
շնորհներն ու Բրիստոսի մէջ եղած շնորհաց լե-
ցունութիւնը: Այս ժամերը բոլոր ներկաներուն

համար փառաբանութեան ու անձնաքննութեան եւ նուիրման օրհնաբեր պահեր եղան: Այս խորհրդածութեան ժողովները բաւարար համարուելով եւ տրուած ըլլալով հարցերու առատութիւնը, մասնաւոր ժամանակ չյատկացուեցաւ բանախօսութեանց համար:

Երկար ժամանակ տրուեցաւ լսելու զանազան եկեղեցիներու երկամեայ տեղեկատուութիւնները: Եկեղեցիներու ընդհանուր վիճակն ու հոգեւոր յառաջդիմութիւնը Տէրոջ օգնութեամբ քաջալերական եղած էր, եւ համազումարս քանիցս փառք տալու պատեհութիւններ ունեցաւ լսելով զանազան դաշտերու հոգեւոր շինութեան եւ յառաջդիմութեան մասին: Այս տեղեկագիրներէն բղխած տեղական կամ ընդհանուր թելադրութիւնները, դժուարութիւնները եւ կարիքները մի առ մի քննուեցան գործակիցներու եւ պատուիրակներու խառն ժողովին մէջ: Այսպէսով կարգ մը հարցեր արդէն իրենց զոհացուցիչ լուծումը գտան: Ուրիշ խնդիրներ յղուեցան Exe. Comitéի, եւ ուրախ ենք որ արդէն մէջտեղ դրուած հարցերու մեծամասնութիւնը կարգադրուեցաւ:

Executive Comité ի հայ ներգայացուցիչները լրացուցած էին իրենց պաշտօնավարութեան շրջանը: Ուստի ատենադպիրը Բրօֆ. Գ. Խայիկեան ամփոփ պատմական մը ըրաւ քօթիթէի անցեալ գործունէութեան մասին: Մեր եղբայրներուն իմաստուն ու կարող կարգադրութիւններն ու ջանքերը ուրախութեամբ գնահատուեցան բոլոր ներկաներէն: Ապա ձեռնարկուեցաւ քուէարկութեան եւ ընտրուեցան երկու տարուայ պաշտօնավարութեան մը համար Վեր. Զ. Ղազարոսեան, Պատ. Ա. Փափաղեան եւ Պատ. Ժ. Պարսումեան:

Յարգ Executive Comité ի ատենադպիրն էր որ կ'արձանագրէր Միութեան ժողովի ատենադրութիւններն ալ: Համազումարը փափաքեցաւ որ Միութեան ժողովը ունենայ իր քարտուղարը եւ ընտրեց զայն:

Ընդհանուր խորհրդածութիւններէ եւ Executive Comitéի նիստերէն յետոյ ի մէջ ալոց տրուեցան նաեւ հետեւեալ որոշումները.—

Ա. Ընտրել Վ. Շ. Օ. ի օգնական գանձապահ մը որ մասնաւոր կերպով զբաղի Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու գոյացուցած եւ սոյն հոգիոր գործին համար Executive Comité ի վճարուած հաշիւովը: Պատ. Ա. Փափաղեան որոշուեցաւ այս գործին համար: Ապա որոշուեցաւ որ 1935ի համար 25000 ֆրանք վճարուի հայ եկեղեցիներու կող-

մէ, որոշուեցաւ իւրաքանչիւր եկեղեցիի բերելիք բաժինը:

Գ. Համազումարը ընթացք տուաւ Փարիզի ներկայացուցիչներուն առաջարկին եւ Փարիզի եկեղեցիին իբր օգնական աւետարանիչ նշանակեց եղբ. Գալվին Պարսումեանը, որ արդէն մէկ տարի առաջ աւարտած էր Լոզանի Աստուածաբանական ճեմարանի ընթացքը:

Դ. Միութեան ժողովները կատարել 1 տարի Լիօն եւ յաջորդ տարին ուրիշ փափաքող եկեղեցիի մը մէջ: Իւրաքանչիւր եկեղեցի իրաւունք ունենայ ի հարկին իր հոգեւոր պաշտօնականներուն թիւին չափ ալ աշխարհական ներկայացուցիչներ զրկելու:

Ե. Նկատի առնուեցաւ «Բանբեր»ի պիւտճէն, որ մասնաւոր օտար դրամներու անկման պատճառաւ կը դիմագրաւէր նիւթական դժուարութիւններ: Որոշուեցաւ որ եկեղեցիներու մէջ մասնաւոր ջանքեր ըլլան այս վիճակը դարմանելու՝ ապահովելով նուիրատուութիւններ և նոր բաժանորդներ:

Զ. Մկրտութեան հարցը կրկին քննուեցաւ զանազան տեսակէտներէ եւ ջանք մը եղաւ քուէարկուած բանաձեւի մը շուրջ ընդհանուր համաձայնութիւն մը գոյացնել:

Ամէն գիշեր տեղի ունեցան աւետարանական ժողովներ: Ուրախալի էր տեսնել Աւետարանին փրկարար գործութիւնը՝ փնտռող եւ կարօտ հոգիներու մէջ: Այս ժողովները յատկապէս ոմանց փրկութեան եւ ոմանց ալ հոգեւոր հաստատութեան պատճառ եղան:

Մինչ մեր առջեւ եղած դժուարութիւնները լուծելու համար մեր աչքերը կը վերցնենք մեր Փրկչին եւ կը կոթնինք իր պատուական խոստումներուն, կը փափաքինք նաեւ որ իւրաքանչիւր Աստուծոյ գաւակ յօժար եւ իրական գործակցութեամբ մը իր սրտին վրայ կրէ Ֆրանսայի դաշտը, Աստուծոյ առջեւ միջնորդելու, նրբիբելու եւ գործելու իր փառքին համար:

Հունձքին Տէրը Ինքը, «Տէրոջ բերք» ծանրացնէ իր գաւակներուն սրտերուն վրայ:

Քարտուղար Միութեան ժողովին

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏՈՒՆ

Rédaction du « PANIÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, Ru 39 St Savournin - Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շաբաթաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց
մանկանց 11 Rue de l'Eclipse

Շաբաթաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն ժիւլիէնի, Սէն Սիմոնի, Սէն Մարկրի-
թի, Սէն ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

Սէն Ռ. ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԱՅ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պազգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիլի.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:

14ին քարոզ եւ աղօթածողով:
.....

ՎԱԼԷՆՍ.— Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès Boury les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:
.....

ԼԻՐՆ.— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):
.....

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Աբրահամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
57 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournefort Paris 5^e

Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-
դութեան Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սր. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville



Յարմարագոյն գիրքը անապաշխար բարեկամի մը ձեռքը տալու: Անիկա ինքնամփոփման եւ խորհրդածութեան բաղմամբիւ պատեհութիւններ պիտի ներկայացնէ: Փորձեցէք հեղմը գործածել այս գիրքը որպէս աւետարանչութեան միջոց մը: Գին 4 ֆր. ձեռքէ, 5 ֆր. սուրհանդակի ծախքով: